



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի (վարչական) դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ 0187/05/2009թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Բեգլարյան

Վարչական գործ թիվ 0187/05/2009թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«5» մարտի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով, կազմով՝

նախագահությամբ դատավոր՝
մասնակցությամբ դատավորներ՝

Կ. Ղարայանի
Գ. Հարությունյանի
Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Մ.Մինասյանի /այսուհետ նաև՝ վիճակագրական ծառայություն/ վճռաբեկ բողոքը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /այսուհետ վարչական/ դատարանի 2009թ. դեկտեմբերի 22-ի վճռի դեմ՝ ըստ հայցի ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության ընդդեմ ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի՝ 20.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը .

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է պատասխանողից բռնագանձել 20.000 ՀՀ դրամ:

ԼՂՀ վարչական դատարանի 22.12.2009 թվականի թիվ 0187/05/09 վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սխալ է կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի՝ ա/ կետը և հայցը մերժել: Գործով բացակայում են նշված օրենքի 63-րդ և 64-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը չի հիմնավորել վարչական ակտի՝ որևէ օրենքի խախտման, սխալ կիրառման կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա կազմված լինելու փաստը:

Անահիտ Ալավերդյանը խախտել է «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջը և վիճակագրական աշխատանքների ծրագրին համապատասխան՝ սահմանված կարգով և ժամկետներում, 2009թ. հունվար-հունիս ժամանակաշրջանի համար, ծառայություն անհրաժեշտ վիճակագրական տվյալներ և տեղեկություններ չի ներկայացրել, ինչն էլ հիմք է հանդիսացել անհատ ձեռներեցին ՎԻՎ ԼՂՀ օրենսգրքի 169-2-րդ հոդվածով պատասխանատվության ենթարկելու համար:

Ա/Ձ Անահիտ Ալլահվերդյանը իրավաչափ է ենթարկվել վարչական պատասխանատվության, որպես պատասխանատվության ենթարկվողի պատիժ նշանակելիս բացատրվել են նրա իրավունքներն ու պարտականությունները նախատեսված ՎԻՎ օրենսգրքի 267-րդ հոդվածով, հաշվի են առնվել վարչական խախտումը ինչպես ծանրացնող, այնպես էլ մեղմացնող բոլոր հանգամանքները, անհատ ձեռներեցի ստորագրությամբ հաստատված է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման գանգատարկման ու բողոքարկման վերաբերյալ հոդվածներին ծանոթացած լինելու փաստը, որևէ հիմք չկա ԼՂՀ ԱՎԾ որոշումը անվավեր ճանաչելու համար:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ, 125-րդ, վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ, 114-րդ, 151-րդ, 153-րդ հոդվածներով հայցը մերժել է, մինչդեռ դատարանը չի կատարել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի պահանջները և հայցը բավարարել:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը պատշաճ ձևով չի հետազոտել և գնահատել գործով ապացույցները: Վիճակագրության Ասկերանի շրջանային բաժնում ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի 2009թ. հունվար-հունիս ժամանակաշրջանի համար ներկայացված հաշվետվության մուտքագրումն իրականացվել է սահմանված կարգով՝ մուտքի դրոշմակնիքով և համապատասխան գրանցամատյանում, որտեղ բացակայում են ջնջումները: Հայցադիմումին կցված ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի ներկայացրած հաշվետվության ձևաթղթում նշված է դրա ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը:

Պատասխանողի՝ ազգանվան մեջ ուղղագրական սխալը չի կարող հիմք հանդիսանալ հայցի մերժման համար, քանի որ վարչական ակտը կազմված է նրա կողմից թույլ տրված խախտման համար և տվյալ դեպքում ազգանվան գրառման մեջ առկա սխալը կրում է ձևական բնույթ:

Դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Կիրառված վարչական ակտը ա/ձ Անահիտ Ալլահվերդյանը ոչ միայն չի բողոքարկել, այլև 21.12.2009թ. կամավոր մուծել է 1500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ պետական տուրքի գումարը և նշանակված տուգանքի գումարից՝ 14000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամը, իսկ 25.01.2010 թվականին վճարել է տուգանքի չվճարած մասը՝ 6000 /վեց հազար/ ՀՀ դրամը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /վարչական դատարանի/ թիվ 0187/05/09թ. վճիռը և հայցը բավարարել, ա/ձ Անահիտ Ալլահվերդյանից պետական բյուջե բռնագանձելով նաև մուծված 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ պետական տուրքը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության Ասկերանի շրջանի վիճակագրական բաժին ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի ներկայացրած 2009թ. հունվար-հունիս ամիսների, ձև թիվ-1՝ առևտրի շրջանառության մասին հաշվետվությունը թվագրված է 13.08.09 թվականին: Թիվ 13-ը գրված է ջնջումներով:

Վիճակագրության Ասկերանի շրջաժամում ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի հաշվետվությունը գրանցված է 13.08.2009թ. թիվ 156 համարի տակ:

13.08.2009թ. Վիճակագրության Ասկերանի շրջաժամի պետը նույն շրջանի Իվանյան գյուղի անհատ ձեռներեց Անահիտ Ալլահվերդյանի նկատմամբ կազմել է թիվ 000361 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը՝ բաժին, ձև 1 առևտուր 2009 թվականի առաջին եռամսյակի վիճակագրական հաշվետվությունները սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու փաստի առթիվ:

Դատական ակտին նախորդած օրը՝ 21.12.09թ. Անահիտ Ալլահվերդյանը որպես վարչական տուգանքի գումարի մաս պետական բյուջե է փոխանցվել 14000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ և վիճակագրական ծառայության կողմից մուծված 1500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ մուծված պետտուրքի գումարը: Տուգանքի չվճարած՝ 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ պատասխանողը պետբյուջե է փոխանցել 25.01.10 թվականին:

Պատասխանողը չի մասնակցել գործի դատաքննությանը:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ՝ գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի՝ պետական վիճակագրական տեղեկություններ տրամադրողները պարտավոր են՝ ծրագրին համապատասխան՝ սահմանված կարգով և ժամկետներում ծառայություն ներկայացնել ծրագրի իրագործման համար անհրաժեշտ վիճակագրական տվյալներ և տեղեկություններ:

ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2008թ. փետրվարի 18-ի թիվ 17 որոշմամբ ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պետական վիճակագրական հաշվետվության (ձև թիվ 1 առևտուր (ամսական)) ներկայացման ժամկետ է սահմանված մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը:

Ա/Զ Անահիտ Ալլահվերդյանը 2009թ. հունվար-հունիս ամիսների առևտրի շրջանառության մասին հաշվետվությունը վիճակագրության Ասկերանի շրջաժին է ներկայացրել սահմանված ժամկետից ուշացումով՝ 13.08.2009թ.

«Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների,... համար առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 1622 1-ին մասը սահմանում է, որ ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից պետական վիճակագրական դիտարկումների համար անհրաժեշտ հաշվետվություններն ու տեղեկությունը սահմանված ժամկետներում և ամբողջ ծավալով չներկայացնելը, ինչպես նաև դրանք ոչ սահմանված ձևով, աղավաղումներով և անստորագիր ներկայացնելը՝ առաջացնում են նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Վարչական գործի նյութերից հաստատված է, որ ձև թիվ 1-առևտուր վիճակագրական հաշվետվությունը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար 13.08.2009թ. վիճակագրության Ասկերանի շրջաժնի պետի կողմից Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի նկատմամբ կազմվել է թիվ 000361 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունը և վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը, որով անհատ ձեռնարկատերը ՎԻՎ ԼՂՀ օրենսգրքի 1692 հոդվածի 1-ին մասով ենթարկվել է 20000 (քսան հազար) ՀՀ դրամ տուգանքի: Ստորագրությամբ Անահիտ Ալլահվերդյանին բացատրված են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նույն օրենսգրքի 286-288-րդ հոդվածներով նախատեսված որոշման գանգատարկման կարգը: Արձանագրության, որոշման մեկական օրինակը հանձնվել է անհատ ձեռնարկատիրոջը:

Այսինքն, ընդունված վարչական ակտում (թիվ 000361 որոշումում) վարչական մարմնի կողմից նշված են նման որոշում ընդունելու էական փաստական և իրավական հիմքերը, իսկ վարչական մարմինն էլ անհատ ձեռնարկատիրոջը տուգանել է օգտվելով հայեցողական լիազորությամբ իրեն վերապահված մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը ընտրելու իրավունքից, հետևապես ընդունված վարչական ակտը իրավաչափ է, որովհետև ընդունվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը չի բողոքարկվել: Գերագույն դատարանը նաև հաստատված է համարում, որ թիվ 000361 արձանագրությունը և որոշումը կազմված են ա/ձ Անահիտ Ալլահվերդյանի նկատմամբ, թեկուզ արձանագրության և վարչական ակտում վարչական խախտում կատարած անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը նշված է Ալլահվերդյան:

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ վարչական դատարան կարող են դիմել...վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով:

Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական ակտով նախատեսված պայմանի կատարման պահով ավարտվում է դրա գործողության ժամկետը:

Գործի նյութերից պարզված է, որ ա/ձ Անահիտ Ալլահվերդյանը ամբողջությամբ վճարել է թիվ 000361 որոշմամբ նշանակված տուգանքը, 25.01.10թ. ավարտվել է նշված որոշման գործողության ժամկետը, ուստի և վարչական ակտի հիման վրա ա/ձ Ալլահվերդյանից բռնագանձում իրականացնելու պահանջը՝ այն կատարված լինելու հիմքով բացակայում է:

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին կետի՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին: ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ մի մասը:

Այսպիսով վերը նշված հիմքերի առկայությունը բավարար պայման են ԼՂՀ վարչական դատարանի 22.12.2009թ. վճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու համար:

Քննարկելով պետտուրքի հարցը դատարանը համարում է այն լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 22-ի վճիռը բեկանել և գործի վարույթը կարճել:
2. Պետտուրքի հարցը համարել լուծված:
3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Կ.ՂԱՐԱՅԱՆ

Դատավորներ՝

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**